

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ուրիշ օրերէն)

Ցայտարարութիւնը ընդունւում է ամեն լիզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ 1898 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(26-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

ՓԵՏՐՎԱՐԹ «ՄՇԱԿ» ՀԱՍՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՅԻ ՏՕՆ ԵՒ ՏՕՆԵՐԻՆ ՅԱԶՈՐԻ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ՌԻՍԿԱՐԱՏԱՆԸ (Բաղրամյան և Բարձրաբերդ փողոցների անկիւն): Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ դ ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետեւեղ հասցեով. ТИФЛИСЪ, редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Ցայտարարութիւններ ընդունւում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով: Բառեր վճարւում է 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատճառները ուրիշ են. — ՆԵՐԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ի՞նչ է պատճառը. Նամակ Բաղրամյան և Բարձրաբերդ փողոցների անկիւն. Նամակ Արմանիւսից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մակեդոնական գործեր. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ԽԱՆ ԼՈՒՐԵՐ. ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մէլքի աղջիկը:

ՊԱՏՃԱՆՆԵՐԸ ՈՒՐԻՇ ԵՆ

Այս օրերս, երբ կովկասեան Երաւաբանական ընկերութեան մէջ քննւում էր աւազակութեան վերաբերեալ զեկուցումը, կարծիք յայտնողներ եղան թէ աւազակութիւնը պէտք է համարել հետեւանք տընտեսական հանգամանքների և դըրդուն մեքի: Այդ կարծիքի պաշտպան էր «ԿԱՅԿԱՆ» լրագրի խմբագիր Վեյլիչկո, որ տնտեսական պատճառներով ասելով աչքի առաջ ունէր վաշխառութիւնը և հարստահարութիւնը:

Բայց ձիւղ է դա:

Ինչպէս յայտնի է, կայ մի ամբողջ ուղ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

Օջախի մօտ հաւաքվածներից մի քանիսը գընացին Մանասի պատուէրը կատարելու. իսկ մէկը այս ու այն կողմ քաշեց խանձորները, կուտեց կրակը, խորովածի համար տեղ պատրաստեց: Միայն այդ ժամանակ Այախի աչքն ընկաւ մի տարօրինակ երեւոյթի վրա, և նա հարցրեց Մանասից.

— Ի՞նչ է նա... Իմ աչքին է այդպէս երևում, թէ իսկապէս աղջիկ է...

— Աղջիկ է:

Ջրի կփի մօտ կանգնած էր մի աղջիկ և նայում էր նորեկին:

— Ուրեմն աղջիկներ էլ են կուտած քո ձեռքի տակ...

— Ոչ, դա այսօր եկաւ, քեզանից շատ առաջ, կէսօրին...

— Մնա՞կ...

— Մեք ձանաչում ենք նրան և չենք դարձա-նում:

— Բայց ինչպէս եկաւ, ինչու եկաւ:

— Նրա համար դժուարութիւն չը կայ: Նրեկ մեր տղաներից մէկը ի՞նչու սարերից, որ մեզ համար աղ ու հաց բերէ: Այսօր առաւօտեան, վերադառնալիս, նա տեսնում է, որ սա դիւում է մի ինչ որ մարդու հետ. հետուից այնպէս է թուում թէ սրա ընկերը մեր երկրացի է, կասեմ թէ թուրք լինի: Նա ուղարկութիւն չէ դարձ-նում, չարտնականում և ճանապարհ. ասացի որ մենք ձանաչում ենք այս աղջկան: Բաւական

տուրական հողի վրա, նա այնտեղ չէ ծը-նունդ առնում, ուր հաստատվել է նստա-կեաց կեանք, որը իր լաւ և բարերար ազ-դեցութիւնների հետ միասին առաջ է բե-րել և տխուր երեւոյթներ: Մեր երկրի նստակեաց, խաղաղ կուլտուրական կեանքի ամենատխուր երեւոյթներից մէկն է, օրի-նակ, այն, որ զիւղական չքաւոր դասա-կարգը թաղված է պարտքերի մէջ: Այդ երեւոյթի պատճառներից մէկը, անկասկած վաշխառութիւն է և հարստահարութիւ-նը: Իսկ աւազակութիւնը, իբրեւ տնտեսա-կան երեւոյթ, հետեւանք է անկուլտուրա-կանութեան, կանոնաւոր աշխատանքի սո-վոր չը լինելուն, թափառական և հովուա-կան կեանքի ազդեցութեան. կայ մանա-կանց սխալ հասկացած ասպետականու-թիւնը, որի դաւանանքն այն է թէ կա-րելի է ոյծով տէր դառնալ ուրիշի աշխա-տանքին և ստացուածքին: Լինելով հա-յած կարգերի և տնտեսական հասկացո-ւթիւնների հետեւանք՝ աւազակութիւնը ինքը ներկայանում է մեր առաջ իբրեւ մի շատ վնասակար երեւոյթ, որ արգելք է լի-նում մեր երկրի ազգաբնակչութեան տըն-տեսական կեանքի զարգացման:

Եւ այդպէս, աւազակութեան խնդիրը, իբրեւ տնտեսական խնդիր, բոլորովին ուրիշ կերպարանք ունի, քան ներկայացնում են նրան: Կուսերը վաշխառութեան և հարս-տահարութեան դէմ, բայց ամենին չը կարենք թէ այդ կուլով մենք աւազակու-թեան խնդիրն ենք լուծում և նրան ոչն-չացնում: Աւազակութեան դէմ մաքառելու համար հարկաւոր են ուրիշ միջոցներ:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՆԸ

Ուսանողական կեանքի մէջ յաճախ երեացող տխուր երեւոյթներ և ցաւալի դէպքեր, որոնք ցոյց են տալիս, թէ ընդհանուր ուսանողական բարոյական աշխարհայեացքի մէջ մի զգալի փոփոխութիւն և յեղաշրջում է առաջ եկել վեր-ջին 15—20 տարւոյ ընթացքում, թէ նա այլ

— Խօսացնես, կապելու խնդիր է, ասաց մէկը. — Բայց այսօր կարկանդակ մեր չորերը: Այն ժամ առաջ միւս գոմում նստած էր կրակի առաջ և արագ գործում էր ասեղով: Գործի տակ նա մի շատ լաւ աղջիկ է...

Օջախի վրա բարձրացաւ խորովւող մսի մու-խը. տղաները պղպղէ էին շարքով և այս ու այն կողմից ահազին շափուրներ էին պտտեցնում կրակի վրա: Ամեն մէկը իր շափուրին էր ծա-ւալում. պղպաճների ետեւում կանգնել էին հե-թի յաղաղները. խորովածի ակործելի հոտը ամենքին ոտքի էր կանգնեցրել: Աղջիկը առաջ եկաւ և հաց բաժանեց. նա չը մտապաւ. և հի-ւանդին: Ընդհանուր սեղան չը կար. ամեն մէկը հանում էր շափուրի ծայրից խորովածը և ու-տում էր ուր ուղում էր: Առատաբեր կաթնոցը քիչ հանգարովի էր, սրովհետեւ կրակը փոքրա-ցել էր և վերանկաւ նորից հաստատվում էր սառ-նամանիքը:

— Այս մտից կշտանալ չի լինի, բացականչեց Մանասը, մեծ բաւականութեամբ կրծքով մի մեծ ոսկոր:

— Օրհնի՛ր Քիրսը, պատասխանեց Այախը, որ նոյնպէս հիացած էր խորովածից:

— Օրհնի՛ր և Նախիջևանը... Կու գիտես, Այ-լան, մի ամբողջ շաբաթ մենք առանց աղի էինք. այն ժամանակ այս միսը չէր կարելի մո-տեցնել բերանին: Այսօր աղ հասաւ մեզ: Հաւա-տան, առանց աղի մարդ կը մեռնի:

Շատերը հաստատեցին այդ բանը: Միմեկեան միջից նոր շափուրներ էին լոյս ընկնում, ա-մենքի ակործանել սաստիկ զրգուլած էր, կար-ծես սովից էին ազատվել: Արտաքին դիպակից ընկած դիտարը այդ երեւոյ անվերջ դժուարա-նեղ, հիացմունք զարթեցրեց: Մուլը դնալով

ևս իր կողման բարձրութեան վրա չէ կանգնած, անկասկած, տարկում է շատերին հարցնել ինչ է պատճառը: Ինչ է պատճառը, որ ժամանա-կակից ուսանողութիւնը այլ ևս չէ գերադասում դիտութեան շահերը ուրիշ որ և է շահերից. ինչ է պատճառը, որ նա աշխատում է ոչ թէ դի-տութիւն, լուրջ ուսումն ձեռք բերել, այլ միայն դիպում, որ նա նայում է համալսարանի վրա ոչ թէ իբրեւ դիտութեան, ընդհանուր քաղաքա-կրթութեան կենտրոնի և շտիմարանի վրա, այլ լոկ մի դիւանատան վրա, որտեղից պէտք է ստանալ վկայական, որ լայն կերպով բաց կա-նի նրա առաջ դանդաղ նիւթական բարձրների — հարստութեան, չաղ և փառաւոր պաշտօննե-րի, դուրձութեան և օծիաւոր ամուսնութեան դուները: Բուրժուական և պրոլետարական ձգտումներ, նեղ, անհերքաւոր ոգի, չօլմիւս-տական հայեացքներ, — ահա ժամանակակից ու-սանողութեան ընդհանուր պատկերացոյցը: Ի հարկէ, բացառութիւններ միշտ կան, բայառու-թիւններ, որոնք, ինչպէս միշտ, հէնց նրա հա-մար և լինում են, որ հաստատեն իրողութիւնը: Բայց թէ ժամանակակից ուսանողութիւնը իր հայեացքներով, իր տեղեկացիւններով, իր վարմունքով և ուղղութեամբ զգալի կերպով տարբերվում է վաթիսականական և եօթնամասնական թակամների ուսանողութիւնից — այդ արդէն մի անհերքելի իրողութիւն է. ուսանողութիւնը, այսպէս ասած, մանրացել է, նրա բարոյական և մտաւոր մակերեւոյթը ստորացել, աշխարհա-հայեացքը սահմանափակվել է: Նա ոչ միայն չէ հետաքրքրվում դիտութեան շահերով, այլ նոր իսկ շատ անգամ համալսարան չէ յաճախում, դատախառնութիւններին ունկնդիր չէ լինում և աւելի լաւ է համարում տանը, մեքենաբար, սերտել դասախօսութիւնները և տարվա վերջին գնալ քննութիւն տալ:

Ինչպէս չը կայ ոչ մի երեւոյթ՝ առանց պատ-ճառի, նոյնպէս և ժամանակակից ուսանողու-թեան այդ բարոյական և մտաւոր անկման ե-րեւոյթը առանց պատճառի չէ: Մի կողմ թիղթի-ւով ընդհանուր պատճառը, մեր դարավերջի ընդ-հանուր շահասիրական և մեքիկան տիւ ոգին ու ուղղութիւնը, կան և առանձին, յատուկ պատ-ճառներ: Այդ պատճառների մի մասը բացատրել է ժողովրդական լուսաւորութեան նոր միջնորդ

թանձրանում էր: Այախը միանգամայն չը նկա-տեց, որ դիմացը, մուխի քաղանքի ետեւում, նստել է Նազուհի. միայն նա էր, որ չէր մա-նակցում ընթերցել: Նրկու ձեռքերի մէջ առնե-լով իր ծուկը, նա ակնապիշ նայում էր անձա-նօթ երիտասարդին, կարծես ուղում էր կարգաւ թէ ինչ կայ նրա լայն ձակաթի տակ: Այախը մի կողմ խորոված միկնեց դէպի նրան: Նա չը շարժվեց, չընդունեց պատառը և յանկարծ հարցրեց.

— Կու հաւատացրէ դրան:

Եւ ցոյց տուեց Մանասին: Այախի դէմքը վրա երեաց մի ներողամիտ ժպիտ: Մանսը նը-շան: Մարդիկ դրանով են ցոյց տալիս թէ խնե-թի հետ գրուել չեն դնում: Եւ աղջիկը շտապեց մի կտրուկ ձայնով հեքել այդ բանը:

— Եւ խնեթ չեմ, ասաց նա: — Հիմա ես հա-րաւոր մարդ եմ և կարող եմ լացացնել բախ-տաւորներին: Այդ դժուար չէ, եթէ ուղտում...

Խորին ինքնապաշտական ցոյց տուելով մի ծիծաղ յանկարծ դուրս ցայտեց, ընդհատելով այդ խօսքերը: Խեղճ աղջիկ... Այախը ամաչեց այդ մտրված դէմքից և հանդարտ կեցւով պա-տասխանեց.

— Հաւատում եմ: Բայց դու, ի հարկէ, խեղճ ես և չես լացացնի...

— Չէ, միշտ ես բախտաւորը լաց չը լինի, խեղճը չը պիտի ծիծաղէ: Այդպէս է երեւում...

— Ի՞նչ կը լինի որ երկուսն էլ ծիծաղեն:

— Հա, այդ ուրիշ բան է:

Նա հեռացրեց ձեռքերը ծոկնից և մեղմ, շատ մեղմ կերպով ծիծաղեց. նրա դէմքը այնպիսի վիշտ և զարթոնք չէր ցուցնում, որ յանկարծաւոր վարակիչ ուրախութիւն:

— Գիտես... Ես գտայ իմ մօրը... Նա ինձ

